Դասընթացի մասնակցության պայմանագիր

Ք. Երևան «22» հունվարի 2018թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝«Պատվիրատու»), ի դեմս գործադիր տնօրեն՝ Արմեն Աբրահամյանի, մի կողմից, և «Մայքրոսոֆթ Ինովացիոն կենտրոն Հայաստան» հիմնադրամն (այսուհետ՝«Կատարող»), ի դեմս տնօրեն Արտաշես Վարդանյանի, մյուս կողմից, հետագայում կողմեր, կնքեցին սույն պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի թվով 1 (մեկ) մասնակցի՝ Սիրանուշ Արզանյանի համար անցկացնել «Որակի ապահովման հիմունքներ» թեմայով դասընթաց, իսկ Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով վճարել դրանց դիմաց:

2.Կողմերի իրավունքներ և պարտավորություններ

2.1. Կատարողը պարտավոր է Դասընթացը մատուցել բարձր որակով և պատճշատ ձևով, ընդ որում Դասընթացի որակը, բովանդակությունը և այլ պայմաններ պետք է համապատասխանեն սովորաբար կիրառվող միջոցներին: Սույն Պայմանագրով նախատեսված Դասընթացի մատուցման եղանակները Կատարողը որոշում է ինքնուրույն նախապես համաձայնեցնելով այն Պատվիրատուի հետ:

2.2.Կատարողը պարտավորվում է հոգալ դասընթացի կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր վարչական աշխատանքները:

3.Պայմանագրի ժամկետները

3.1. Սույն Պայմանագրի 1.1. կետի շրջանակում Դասընթացն անցկացվում է 2018 թ. Հունվարի 23-ից՝ Կատարողի կողմից իր պաշտոնական www.mic.am կայքի միջոցով նախօրոք հայտարարված պայմաններով: Դասընթացը բաղկացած է 15 դասից՝ ընդհանուր 30 ժամ տևողությամբ:

4.Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայության ընդհանուր ածրեքը կազմում է 57000 (հիսունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն :

4.2. Սույն Պայմանագրի 4.1. կետում նշված գումարը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ Պայմանագրի ստորագրման պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ծառայության ավարտին Կողմերը չեն արձանագրում թերություններ, ապա Կատարողի կողմից մատուցված ծառայությունները համարվում են պատշաճ կատարված՝ ամրագրվելով հաշվարկային փաստաթղթի ստորագրմամբ, որը միաժամանակ հանդիսանում է հանձնման-ընդունման ակտ:

5. Այլ պայմաններ

5.1. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրի պայմանները կարող են փոխվել, լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

5.2. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.3. Սույն Պայմանագիրը կնքվում է 2

օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմաններն ու ստորագրությունները

« Պատվիրատու»	«Կատարող»
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը	«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան» Հիմնադրամ
Գործունեության հասցե՝	Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Հովսեփ Էմինի 123
Հայաստան, 0069, Երևան	Գործունեության հասցե՝ ք. Երևան 009, Տերյան 105,
Կարապետ Ուլնեցու փող., 68 շենք	ՀՊՃՀ 10-րդ մասնաշենք, 6-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02602449	ՀՎՀՀ՝ 00110858
Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	Բանկ՝«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ՝ 163518012543	հ/հ՝ 157-0022802440-100
Արմեն Աբրահամյան	Արտաշես Վարդանյան